Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/09 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

22 մարտի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
նախագահ (ԳԱՊ)՝ Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամներ (ԳԱ)՝ Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝ Ջլիետ Համբարձումյան
բացող անդամներ (ԲԱ)՝ Դավիթ Գրիգորյան
քարտուղար՝ (ՄՀմ) Հայկ Խաչատրյան

Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գները՝

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	նախահաշվային գները /ՀՀ դրամ/
1	Բենզին, պրեմիում	42,000,000
2	Դիզելային վառելիք, ամառային	5,270,000

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 22.03.2017թ.-ի ժ 10:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել են՝

N	Մասնակից	Հասցե
1	ՖԼԵԾ ՍՊԸ	ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30
2	Մաքսիուր ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8. 1/1 տարածք

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները.

ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/

Հ/հ	Անվանումը	Մասնակցի անվանումը և գնային առաջարկները	
		ՖԼԵԾ ՍՊԸ	Մաքսիուր ՍՊԸ
1	Բենզին, պրեմիում	35,300,000	36,800,000
2	Դիզելային վառելիք, ամառային	5,440,000	5,525,000

Մասնակիցների հայտերի գնահատում

Մասնակիցների.

- Հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- Ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.
- Հայտերը (առանց գնային պայմանների) գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից գնահատվել են բավարար.
- Բոլոր չափաբաժինների մասով ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/09 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստը կասեցնել և առաջին տեղեր զբաղեցրած Մասնակիցներին որոշելու նպատակով Մասնակիցների հետ վարել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

   Կողմ՝ 3, դեմ՝ 0

2. Մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ծանուցել բոլոր Մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին՝ հայտնելով դրա վարման օրվա, ժամի և վայրի մասին:

   Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն ու գների նվազեցման շուրջ բանակցություններն անցկացնել նույն վայրում՝ 27.03.2017թ.-ի ժամը 12:00-ին, և բանակցությունների համար սահմանել ժամկետ՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար 10 րոպե:

   Կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Աշոտ Գրիգորյան

գնահատող անդամ (ԳԱ)՝ _____ Աշոտ Ավետիսյան

(ԳԱ)՝ _____ Ջուլիետ Համբարձումյան

բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Դավիթ Գրիգորյան

քարտուղար՝ (ՄՀՄ) _____ Հայկ Խաչատրյան